

ՀՀ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Եվգենյա Արտաշեսի Հակոբյան Անահիտ Խաչատուրի Մարկոսյան

Հոդվածը ստացվել է՝ 11.09.22, ուղարկվել է գրախոսման՝ 04.10.22., երաշխավորվել է տպագրության՝ 26.10.22

Ներածություն: Տնտեսության յուրաքանչյուր բնագավառ, անկախ ոլորտային պատկանելիությունից, ենթարկվում է պետության կողմից մշակված օրենսդրական քաղաքականությանը: Ճիշտ և հիմնավոր մշակված նորմատիվ-իրավական բազան միաժամանակ նպաստում է ոլորտի կայուն զարգացմանը, ինչպես նաև ներգրավում է ներդրումներ: Հանքարդյունաբերության ոլորտը, լինելով ՀՀ տնտեսության ռազմավարական առաջնային ոլորտներից մեկը, այժմ կարգավորվում է մի քանի օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, որոնց վերաբերյալ մինչ օրս կատարված վերլուծություններից ստացված արդյունքների որոշ մասը ներդրվել է, իսկ մյուսը՝ դեռ ոչ, ավելին՝ նախաձեռնվել են նոր փոփոխություններ, առաջարկների փաթեթ, որոնց վերաբերյալ չի կատարվել որևէ վերլուծություն: Ուստի անհրաժեշտություն է առաջացել կատարել ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական նորմերի համակողմանի վերլուծություն, ուսումնասիրել այդ օրենքներում կատարված փոփոխությունը, ինչպես նաև ոլորտը կարգավորող և առայժմ նախագծային փուլում գտնվող հայեցակարգը, վեր հանել առկա բացթողումները և մշակել առաջարկությունների փաթեթ դրանց արդյունավետ լուծման ուղղությամբ: Վերջինով էլ պայմանավորված է ընտրված թեմայի հրատապությունն ու **արդիականությունը**: Սույն հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, Կառավարության որոշումները և վեր հանել առկա բացթողումները: Տվյալ նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել են հետևյալ **խնդիրները**, մասնավորապես. ուսումնասիրել և վերլուծել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, գործող նորմատիվ իրավական ակտերը, վեր հանել դրանցում առկա բացթողումները, մշակել առաջարկությունների փաթեթ՝ ուղղված դրանց լուծմանն ու օրենսդրաիրավական դաշտի կատարելագործմանը:

Գրականության վերլուծություն: Հանքարդյունաբերության ոլորտի օրենսդրաիրավական հիմքերի մասին կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք իրականացրել են ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա հեղինակները, տարբեր վերլուծություններ են կատարել նաև տեղական և միջազգային կազմակերպությունները՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր: Այդ ուսումնասիրություններն ու վերլուծությունները միտվում են ոլորտի հարկային կարգավորման մեխանիզմների կատարելագործմանը, հարկային օպտիմալ դրույքաչափերի ներդրմանը, ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտի վերլուծությանը՝ դրանք համադրելով կառավարությունների ծրագրերում պլանավորած և փաստացի ստացած արդյունքների հետ: Վերջինների թվին է պատկանում

ուշադրության արժանի «Լույս» հիմնադրամի տեղեկատվա-վերլուծական կենտրոնի կողմից վերջերս իրականացված ծավալուն վերլուծությունը՝ կապված արդյունաբերության ոլորտում 2017-2021 թթ ընթացքում տարբեր կառավարությունների ծրագրային դրույթներով իրականացված աշխատանքների համեմատության հետ¹: Հեղինակները ներկայացրել են դիտարկվող տարիների ընթացքում կառավարությունների ծրագրերում տեղ գտած դրույթները, որոնք վերաբերում են հանքարդյունաբերության ոլորտին, և թե դրանցից ո՞ր մասն է կյանքի կոչվել, ինչպիսի համընկնումներ կան և որոնք են մնացել անկատար:

Ոլորտին վերաբերող հաջորդ, և բավականին հետաքրքիր վերլուծություն է Համաշխարհային բանկի կողմից 2014 թվականին Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտին նվիրված երկու թեմատիկ աշխատանքները, մասնավորապես՝ «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում կայուն և ռազմավարական որոշումների կայացումը» և «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և սոցիալական կայունության բարելավում» գեկույցները, որոնք նպատակ են հետապնդել նախ ապահովել հանքարդյունաբերության ոլորտի բնապահպանական և սոցիալական խնդիրների քաղաքականության շուրջ ծավալվող երկխոսության տեղեկատվական հիմքը, և հետո՝ արմատավորել բնապահպանական և սոցիալական կայունության սկզբունքները Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի զարգացման քաղաքականության ներքո և բարելավել դրանց մասին պատկերացումները², որոնցում վերլուծված են կուտակման ներուժ ունեցող ընդերքօգտագործման բացասական և դրական ազդեցությունները և 2011-2012 թթ ոլորտում ուղղակի օտարերկրյա ներդրումների, օգտակար հանածոների արտադրության դինամիկան և այլն:

Ոլորտին վերաբերող հաջորդ վերլուծությունը Հայաստանի բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման համակարգ գեկույցն է, որը մշակվել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող և S2Q4-ի, Միավորված Ազգերի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Միավորված Ազգերի շրջակա միջավայրի ծրագրի, Միավորված Ազգերի արդյունաբերական զարգացման ծրագրի և Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «Եվրոպական Միությունը հանուն շրջակա միջավայրի գործողությունների» («ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի») ծրագրի շրջանակներում 2022 թվականին: Զեկույցը մանրամասնորեն վերլուծում է Հայաստանի բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման վիճակը, ներառյալ իրավական և ինստիտուցիոնալ դաշտերը, վերահսկողության, կիրարկման և պահանջների կատարմանն ուղղված խթանիչ գործողությունները³:

¹ 2017-2021 թթ ընթացքում ՀՀ երեք կառավարությունների ծրագրային դրույթներով իրականացված աշխատանքների համեմատություն <https://www.luys.am/img/artpic/small/baf12ef1822a656472287.Industry-changesaccepted.pdf>

² <https://documents1.worldbank.org/curated/en/239481468206070547/pdf/884680v20ARMENIA%20Box385316B00PUBLIC0.pdf>

³ <https://www.eu4environment.org/app/uploads/2022/03/Environmental-compliance-assurance-system-in-Armenia-ARM.pdf>

Ոլորտին վերաբերող մեկ այլ կարևոր ուսումնասիրություն է 2016 թվականի Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ «Հայաստան. օգտակար հանածոների կայունության ռազմավարական գնահատում» հրապարակումը, որում հանքագործական արդյունաբերության ոլորտի համար հաշվարկվել են ՀՆԱ և զբաղվածության բազմապատկիչները, որոնք համապատասխանաբար կազմել են 1.8 և 5.3: Ըստ հրապարակման՝ ՀՆԱ բազմապատկիչը համեմատելի է այլ երկրների բազմապատկիչների հետ, որոնք տատանվում են միջինում 1-3 միջակայքում, որը օգտագործելով կարելի է գնահատել հանքարդյունաբերության ոլորտի ընդհանուր ներդրումը Հայաստանի տնտեսության մեջ¹: Նշենք նաև, որ ներկայացված հրապարակումը կենտրոնացրել է ոլորտի հիմնական մարտահրավերներն ու հնարավորությունները՝ շեշտը դնելով կարգավորող միջավայրի ձևավորման վրա, որը խթանելու էր ոլորտի կայունությունն ու ներդրումների ներգրավվումը: Մինևույն ժամանակ, կառավարությունը վերջերս հավանություն է տվել տարբեր օրենքների փոփոխություններին՝ բնապահպանական չափանիշների, թույլտվությունների և շինարարական տեխնիկայի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար: 2022 թվականին կառավարությունը հաստատեց մի շարք փոփոխություններ և լրացումներ Հարկային օրենսգրքում և «Պետական տուրքի մասին» օրենքում²: Ավելին, ուշադրության է արժանի նաև այն, որ վերջապես մշակվել է հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարությունը, որը դրվել է հանրային քննարկման³. Ռազմավարության նախագծում կատարված է ոլորտի զարգացման ներկայիս վիճակի, ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (SWOT) մանրամասն վերլուծություն, մշակված են միջոցառումներ՝ ուղղված ոլորտի կայուն զարգացմանը.

Ուշադրության արժանի է Տ.Ի.Բուլիգինայի՝ Հանքային պաշարների արդյունահանման հարկը՝ որպես Խանութի-Մանսիյսկի ինքնավար շրջանի տարածքի շրջակա միջավայրի անվտանգության որոշիչ գործիք ուսումնասիրությունը⁴, որում ներկայացվում է շրջակա միջավայրի վերականգնմանը խթանող մեխանիզմներ, ենթադրում է խոշոր և մանր ընդերքօգտագործող կազմակերպությունների՝ շրջակա միջավայրի վերականգնմանը նպաստող օրենսդրական փոփոխություններ, որոնք հիմնված են հանքանյութերի արտահանման ժամանակ հարկային վճարների հաշվարկման նոր մոտեցումների վրա՝ առաջարկելով խոշոր և փոքր ձեռնարկությունների համար տարբեր դրույքաչափերի կիրառում:

Մեթոդաբանություն: Հոդվածի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ոլորտը կարգավորող օրենքները, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը, կառավարության համապատասխան որոշումները, ոլորտի

¹ https://crm.aul.am/files/2018/05/Armenia_strategic_assessment-eng.pdf

² <https://www.trade.gov/country-commercial-guides/armenia-mining-and-minerals>

³ <https://www.e-draft.am/projects/4619/justification>

⁴ Булыгина Т.И., Налог на добычу полезных ископаемых как определяющий инструмент экологической безопасности территории Хантымансийского автономного округа-Югры, <https://cyberleninka.ru/article/n/nalog-na-dobychu-poleznyh-iskopaemyh-kak-opredelyayuschiy-instrument-ekologicheskoy-bezopasnosti-territorii-hanty-mansiyskogo>

ուսումնասիրմամբ զբաղվող մասնագետների աշխատությունները և այլն: Հոդվածի վերլուծության ժամանակ կիրառվել են տվյալների հավաքագրման, վերլուծության մեթոդները:

Վերլուծություն: ՀՀ հանքարդյունաբերության ոլորտն ունի բավականին հին պատմություն: Այն նշանավորվել է 1770-ական թվականների Ալավերդու, այնուհետև 1840-ականներին Կապանի հանքավայրում պղնձի արդյունահանմամբ, իսկ 1950-ականներից արդեն Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրում մետաղական և ոչ մետաղական հանքային նյութերի արդյունահանմամբ¹: Սակայն այդ թվականներին չկար ոլորտը կարգավորող որևէ հստակ և ամբողջական օրենսդրաիրավական բազա: Այդ ուղղությամբ հիմնավոր բարեփոխումներ սկզբնավորվեցին միայն 2000-ականներին, կապված հանքարդյունաբերական խոշոր ընկերությունների սեփականաշնորհման գործընթացի, պայմանագրային մեխանիզմների ազատականացման հետ:

Հայաստանի Հանրապետությունում, ի թիվս այլ հանքանյութերի, պղնձի և հարակից մոլիբդենի պաշարների արդյունահանումն ու արտահանումը գերակշիռ մաս է կազմում: Հայաստանում պղնձի և մոլիբդենի խտանյութերի առաջատար արտադրողը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է (ԶՊՄԿ), որը շահագործում է Քաջարանի խոշոր հանքավայրը և պատասխանատու է հանքարդյունաբերության ոլորտում տարեկան շրջանառության 60 տոկոսի համար: Նշենք, որ 2021 թվականին «Արդյունաբերական ընկերությունը», որը «Գեոպրոմայնիզ Արմենիա»-ի լիիրավ դուստր ձեռնարկությունն է, ձեռք է բերել ԶՊՄԿ-ի 60 տոկոսը: Այնուհետ ընկերությունն իր բաժնետոմսերի 25 տոկոսը նվիրաբերել է Հայաստանի կառավարությանը²: Պղնձի մեկ այլ նշանակալի աղբյուր է Հայաստանի հյուսիսում գտնվող Թեղուտի հանքավայրը, ինչպես նաև Ագարակի հանքավայրը՝ Իրանի հետ Հայաստանի սահմանի մոտ³: ՀՀ հանքարդյունաբերության մեջ երկրորդ կարևորագույն ենթաոլորտը ռսկու արդյունահանումն է, որի հիմնական մասը գտնվում է Մոթքի, իսկ մյուս մասն էլ՝ Շահումյանի հանքավայրում:

Հանքարդյունաբերության և օգտակար հանածոների հետ կապված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում այս պահին գտնվում են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավասության ներքո, որը ձևավորվել է 2019 թվականին՝ նախկին էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և Տարածքային կառավարման և զարգացման նախարարության միաձուլման արդյունքում: Իսկ ՀՀ հանքարդյունաբերության օգտակար հանածոների ոլորտը ներկա դրությամբ կարգավորվում է 2011 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրքը, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասա-

¹ <https://www.trade.gov/country-commercial-guides/armenia-mining-and-minerals>

² <https://www.trade.gov/country-commercial-guides/armenia-mining-and-minerals>

³ <https://www.trade.gov/country-commercial-guides/armenia-mining-and-minerals>

կար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները: Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության համապատասխան դրույթները, սույն օրենսգիրքը և դրան համապատասխան ընդունված այլ իրավական ակտերը¹:

Այժմ քննարկման փուլում է գտնվում ՀՀ Կառավարության 2021-2026 թթ ծրագրով նախատեսված՝ արդյունաբերության գերակա ոլորտների զարգացման հայեցակարգի նախագիծը², որի նպատակն է սահմանել առաջիկա հինգ տարիներին արդյունաբերության զարգացման համար գերակա ճյուղերը և նախանշել զարգացման ռազմավարական ուղղությունները: Նկատենք, որ ինչպես նախանշվում է քննարկվող հայեցակարգում, ներկայումս Կառավարության կողմից գործուն քայլեր են ձեռնարկվում երկրորդային հումքը տեղում վերամշակելու և տեղական արդյունաբերական ձեռնարկություններին հնարավորություն ընձեռելու զարգացնել սեփական արտադրությունները՝ օգտագործելով սև և գունավոր մետաղների ջարդոնը և թափոնը: Մետալուրգիայի զարգացումը պետք է հետագայում դիտարկել ոչ միայն մետաղի արտադրությամբ, այլ նաև դրանից ստացվող այլ արտադրատեսակների զարգացման համատեքստում: Այստեղ հարկ է շեշտադրել այն հանգամանքը, որ ՀՀ ընդերքօգտագործող ընկերությունները հանքերից կորզում են միայն առաջնային հանքանյութերը՝ մետաղական և ոչ մետաղական, իսկ մնացած մասը՝ առանց երկրորդային վերամշակման ենթարկելու, նետում են պոչամբարներ: Սակայն պոչամբարներում առկա են բազմաթիվ այլ հանքանյութեր, մետաղական և ոչ մետաղական, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ վերոնշյալ հայեցակարգում սահմանված խնդիրների լուծման համար, ու քանի դեռ չկա որևէ օրենսդրական հիմք, որը կարգավորում է պոչամբարներում առկա հանքանյութերի պատշաճ ուսումնասիրությունը, տվյալ խնդիրը շարունակելու է մնալ օրակարգում: Այստեղ առկա է պետական վերահսկողության ցածր մակարդակ, քանի որ տարիներով պոչամբարներում կուտակված թափոնների թեր կամ ընդհանրապես չուսումնասիրվածության պատճառով, մշակող և վերամշակող կազմակերպությունները կորցնում են հայրենիքի հանքային պաշարներից լիիրավ օգտվելու իրավունքը, ինչի արդյունքում անհրաժեշտ հումք նյութերը ներմուծվում են հարևան երկրներից, որն էլ, կապված հումքի բարձր ինքնարժեքի հետ, հանգեցնում է արտադրվող արտադրանքի ոչ մրցունակ լինելուն: Իսկ համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումը կարող է ապահովել մասնագիտական պատշաճ և պարտադիր ուսումնասիրություն և վերլուծություն, ինչպես նաև սահմանել հարկային ար-

¹ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք, [ԱԺ.28.11.2011,ՀՕ-280-Ն](#)

² <https://www.e-draft.am/projects/4177/about>

տոնություններ պոչամբարներում հայտնաբերված և վերամշակման ենթարկված հումքի օգտագործման համար: Վերջինս խթան կարող է հանդիսանալ ինչպես ընդերքօգտագործող կազմակերպությունների համար, ստեղծելով շահագրգռվածություն հավելյալ ուսումնասիրություն կատարելու և հարկային արտոնություններից օգտվելու, այնպես էլ իր դրական ազդեցությունը կունենա բնապահպանական առումներով, քանի որ պոչամբարներում տարիներով կուտակված թափոնները հսկայական վնաս են հասցնում հարակից բնակավայրերին՝ աղտոտելով շրջակա միջավայրը: Այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում նաև երկրաբանական պատշաճ վերլուծության կատարման համար: Տարիներ շարունակ ընդերքօգտագործող կազմակերպությունները կենտրոնացած են եղել միայն պատմականորեն հայտնի հանքանյութերի կորզմամբ: Սակայն կլիմայի ազդեցությամբ բնության մեջ կատարվել են որոշակի փոփոխություններ, ինչը, մեր կարծիքով, նաև ազդել է հանքավայրերում առկա հանքանյութերի վրա: Հայաստանի Հանրապետությունում այս պահի դրությամբ բացակայում են օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերմանն ուղղված երկրաբանական ուսումնասիրություններ: Սակայն, հանքարդյունաբերական զարգացած ոլորտ ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ պարբերաբար կատարվող երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվում են օգտակար հանածոների նոր պաշարներ, ինչը թույլ է տալիս ապահովել նախ ոլորտի կայուն զարգացումը և օգտագործել երկրում առկա օգտակար հանածոների զգալի մասը: Իսկ ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական դաշտի առկայությունը կնպաստի ներդրումների ներհոսքին և երաշխիքներ կտրամադրի ներդրողներին: Հայաստանի Հանրապետությունում այս պահին չկա տվյալ հիմնախնդիրը կարգավորող որևէ օրենք կամ նորմատիվ-իրավական ակտ, որը դյուրին կդարձնի երկրի տարածքում առկա օգտակար հանածոների կառավարումը, ինչն էլ թույլ կտա պատշաճ կերպով օգտագործել ողջ ներուժը:

Այստեղ անհրաժեշտ է շեշտադրել, որ դեռևս 2008 թվականին երկրաբանական գիտությունների դոկտոր Հ.Ս.Ավագյանի կողմից կատարվել է հսկայական աշխատանք, կապված հանքավայրերից կորզվող մետաղական օգտակար հանածոների գնահատման հետ¹: Ցավալին այն է, որ անցնելով երկար տարիներ, տվյալ խնդիրը դեռևս մնում է ակտուալ, ինչը, մեր կարծիքով, համապատասխան օրենսդրական դաշտի բացակայության հետևանք է:

Վերադառնանք քննարկվող հայեցակարգին, որտեղ ամրագրված է նաև վերոնշյալ փաստը, մասնավորապես. ՀՀ-ում առկա է բավական մեծ ներուժ հազվագյուտ մետաղների՝ ռենիումի, սելենի, թելուրի, կադմիումի, բիսմութի և այլ արտադրությունների կազմակերպման համար, ինչպես նաև այն, որ մետալուրգիական արդյունաբերության բազայի ձևավորման հիման վրա հազվագյուտ մետաղների արտադրության կազմակերպումը կապված է մեծ ներդրումների

¹ Ավագյան Հ.Ս. Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարզերի (Սյունիքի և Վայոց Ձորի մարզեր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008 թ

հետ¹: Վերջինս, մեր կարծիքով, առաջարկվող օրենքների նախագծերի մշակմամբ և ընդունմամբ, կարող է լուծում ստանալ և հետաքրքրվածություն առաջացնել նաև օտարերկրյա ներդրողների համար:

2017 թվականին Հայաստանը միացել է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (ԱՃԹՆ)²՝ որպես թեկնածու երկիր: 2020 թվականին EITI Խորհրդի կողմից EITI-ի իրականացման դրական գնահատականից հետո Հայաստանը դարձավ 53-րդ երկիրը, որին շնորհվել է բավարար առաջընթաց ունեցող երկրի կարգավիճակ³: Նշենք նաև, որ հանքարդյունաբերության ոլորտի մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերը հրապարակվում են ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության www.e-register.am կայքում և Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) Հայաստանյան էջում³, որտեղ, սակայն մետաղական հանքաքար արդյունահանող ընկերությունների ցանկը ներկայացված է 03.12.2020 դրությամբ, ինչը, մեր կարծիքով ոլորտի ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման թափանցիկության լուրջ բացթողում է և շուտափույթ թարմացման կարիք ունի:

Տվյալ ուսումնասիրության շրջանակներում շատ այլ հարցեր չենք վերլուծում, սակայն թեմայի ուսումնասիրության տեսադաշտը կրելու է շարունակական բնույթ, և հաջորդ աշխատանքներում մանրամասնորեն վեր են հանվելու ոլորտը կարգավորող օրենքներում տեղ գտած հակասությունները և մշակվելու են դրանց վերացմանն ուղղված միջոցառումներ: Նաև կատարվելու է ուսումնասիրություն՝ ուղղված ՀՀ կառավարության 2021-2026 թթ ծրագրով նախատեսված ռոյալթիների մեխանիզմի բարեփոխմանը:

Գիտական նորույթ: Ուսումնասիրելով ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտը, ՀՀ-ում գործող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, վեր են հանվել դրանցում առկա բացթողումները, թերացումները, մշակվել է առաջարկությունների փաթեթ՝ ուղղված վերջիններիս վերացմանը:

Եզրակացություն:

Ուսումնասիրելով և վերլուծելով ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտը, հանգել ենք մի շարք եզրակացությունների, որոնցից հիմնականները հետևյալներն են՝

1. Հանքարդյունաբերական ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտը գտնվում է կառավարության ուշադրության կենտրոնում՝ ոլորտը կարգավորող օրենքներում կատարելով պարբերաբար փոփոխություններ:

¹ <https://www.e-draft.am/projects/4177/about>

² <https://www.trade.gov/country-commercial-guides/armenia-mining-and-minerals>

³ <https://www.eiti.am/hy/%D4%BB%D5%8D-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D6%80/?tab=88>

Նախագծային փուլում է շատ կարևոր փաստաթուղթ՝ արդյունաբերության գերակա ոլորտների զարգացման հայեցակարգը, որն այս պահին դրված է հանրային քննարկման,

2. ՀՀ ընդերքօգտագործող ընկերությունները հանքերից կորզում են միայն առաջնային հանքանյութերը՝ մետաղական և ոչ մետաղական, իսկ մնացած մասը՝ առանց երկրորդային վերամշակման ենթարկելու, նետում են պոչամբարներ: Սակայն պոչամբարներում առկա են բազմաթիվ այլ հանքանյութեր, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ վերոնշյալ հայեցակարգում սահմանված խնդիրների լուծման համար, որի օրենսդրական կարգավորումը խիստ արդիական է, և նոր ուսումնասիրությունների կարիք ունի: Այստեղ առկա է պետական վերահսկողության ցածր մակարդակ, քանի որ տարիներով պոչամբարներում կուտակված թափոնների թեր կամ ընդհանրապես չուսումնասիրվածության պատճառով, մշակող և վերամշակող կազմակերպությունները կորցնում են հայրենիքի հանքային պաշարներից լիիրավ օգտվելու իրավունքը, ինչի արդյունքում անհրաժեշտ հումք նյութերը ներմուծվում են հարևան երկրներից, որն էլ, կապված հումքի բարձր ինքնարժեքի հետ, հանգեցնում է արտադրվող արտադրանքի ոչ մրցունակ լինելուն: Իսկ համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումը կարող է ապահովել մասնագիտական պատշաճ և պարտադիր ուսումնասիրություն և վերլուծություն, ինչպես նաև սահմանել հարկային արտոնություններ պոչամբարներում հայտնաբերված և վերամշակման ենթարկված հումքի օգտագործման համար: Վերջինս խթան կարող է հանդիսանալ ինչպես ընդերքօգտագործող կազմակերպությունների համար, ստեղծելով շահագրգռվածություն հավելյալ ուսումնասիրություն կատարելու և հարկային արտոնություններից օգտվելու, այնպես էլ իր դրական ազդեցությունը կունենա բնապահպանական առումներով, քանի որ պոչամբարներում տարիներով կուտակված թափոնները հսկայական վնաս են հասցնում հարակից բնակավայրերին՝ աղտոտելով շրջակա միջավայրը:

3. Տարիներ շարունակ ընդերքօգտագործող կազմակերպությունները կենտրոնացած են եղել միայն պատմականորեն հայտնի հանքանյութերի կորզմամբ: Սակայն կլիմայի ազդեցությամբ բնության մեջ կատարվել են որոշակի փոփոխություններ, ինչը, մեր կարծիքով, նաև ազդել է հանքավայրերում առկա հանքանյութերի վրա: Հայաստանի Հանրապետությունում այս պահի դրությամբ բացակայում են օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերմանն ուղղված երկրաբանական ուսումնասիրություններ: Սակայն, հանքարդյունաբերական զարգացած ոլորտ ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ պարբերաբար կատարվող երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվում են օգտակար հանածոների նոր պաշարներ, ինչը թույլ է տալիս ապահովել նախ ոլորտի կայուն զարգացումը և օգտագործել երկրում առկա օգտակար հանածոների զգալի մասը: Իսկ ոլորտը կարգավորող նորմատիվ իրավա-

կան դաշտի առկայությունը կնպաստի ներդրումների ներհոսքին, երաշխիքներ կտրամադրի ներդրողներին: Հայաստանի Հանրապետությունում չկա այս պահին տվյալ հիմնախնդիրը կարգավորող որևէ օրենք կամ նորմատիվ-իրավական ակտ, որի ընդունումը դուրսին կդարձնի երկրի տարածքում առկա օգտակար հանածոների կառավարումը, ինչն էլ թույլ կտա պատշաճ կերպով օգտագործել ողջ ներուժը:

Օգտագործված գրականության ցանկ

14. Ավագյան Հ.Ս. Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարզերի (Սյունիքի և Վայոց Ձորի մարզեր), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008 թ
15. Булыгина Т.И., Налог на добычу полезных ископаемых как определяющий инструмент экологической безопасности территории Хантымансийского автономного округа-Югры,
16. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք,
[ԱԺ.28.11.2011,ՀՕ-280-Ն](#)
17. 2017-2021 թթ ընթացքում ՀՀ երեք կառավարությունների ծրագրային դրույթներով իրականացված աշխատանքների համեմատություն
<https://www.luys.am/img/artpic/small/baf12ef1822a656472287.Industry-changesaccepted.pdf>
18. <https://documents1.worldbank.org/curated/en/239481468206070547/pdf/884680v20ARMENIAN0Box385316B00PUBLIC0.pdf>
19. <https://www.eu4environment.org/app/uploads/2022/03/Environmental-compliance-assurance-system-in-Armenia-ARM.pdf>
20. https://crm.aua.am/files/2018/05/Armenia_strategic_assessment-eng.pdf
21. <https://www.trade.gov/country-commercial-guides/armenia-mining-and-minerals>
22. <https://www.e-draft.am/projects/4177/about>
23. <https://www.eiti.am/hy/%D4%BB%D5%8D-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D6%80/?tab=88>

References

14. Avagyan H.S. Hayastani Hanrapetowt'yan metaghakan o'gtakar hanac'oneri gnahatowmn y'st marzeri (Syowniqi & Vayoc D'ori marzer), Er&an, HH GAA «Gitowt'yown» hratarakchownt'yown, 2008 t'
15. Bulygina T.I., Nalog na dobychu poleznyh iskopaemyh kak opredelajushhij instrument jekologicheskoy bezopasnosti territorii Hantymansijskogo avtonomnogo okruga-Jugry,
16. Hayastani Hanrapetowt'yan y'nderqi masin o'rensgirq, AJh,28.11.2011,HO'-280-N
17. <https://www.luys.am/img/artpic/small/baf12ef1822a656472287.Industry-changesaccepted.pdf>

18. <https://documents1.worldbank.org/curated/en/239481468206070547/pdf/884680v20ARMENIAN0Box385316B00PUBLIC0.pdf>
19. <https://www.eu4environment.org/app/uploads/2022/03/Environmental-compliance-assurance-system-in-Armenia-ARM.pdf>
20. https://crm.aua.am/files/2018/05/Armenia_strategic_assessment-eng.pdf
21. <https://www.trade.gov/country-commercial-guides/armenia-mining-and-minerals>
22. <https://www.e-draft.am/projects/4177/about>
23. <https://www.eiti.am/hy/%D4%BB%D5%8D-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A1%D5%A3%D5%A5%D6%80/?tab=88>

ՀՀ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱ- ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Եվգենյա Արտաշեսի Հակոբյան Անահիտ Խաչատուրի Մարկոսյան

Համառոտագիր: Տնտեսության յուրաքանչյուր բնագավառ, անկախ ոլորտա-
յին պատկանելիությունից, ենթարկվում է պետության կողմից մշակված օրենս-
դրական քաղաքականությանը: Ճիշտ և հիմնավոր մշակված նորմատիվ-իրա-
վական բազան միաժամանակ նպաստում է ոլորտի կայուն զարգացմանը, ինչ-
պես նաև ներգրավում է ներդրումներ: Հանքարդյունաբերության ոլորտը, լինելով
ՀՀ տնտեսության ռազմավարական առաջնային ոլորտներից մեկը, այժմ կարգա-
վորվում է մի քանի օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, որոնց վերա-
բերյալ մինչ օրս կատարված վերլուծություններից ստացված արդյունքները
դեռևս չեն ներդրվել, ավելին՝ նախաձեռնվել են նոր փոփոխություններ, առա-
ջարկների փաթեթ, որոնց վերաբերյալ չի կատարվել որևէ վերլուծություն: Ուստի
անհրաժեշտություն է առաջացել կատարել ոլորտը կարգավորող օրենսդրա-
իրավական նորմերի համակողմանի վերլուծություն, ուսումնասիրել այդ օրենք-
ներում կատարված փոփոխությունը, ինչպես նաև ոլորտը կարգավորող և
առայժմ նախագծային փուլում գտնվող հայեցակարգը, վեր հանել առկա բացթո-
ղումները և մշակել առաջարկությունների փաթեթ դրանց արդյունավետ լուծման
ուղղությամբ: Վերջինով էլ պայմանավորված է ընտրված թեմայի հրատապու-
թյունն ու **արդիականությունը**: Սույն հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել ՀՀ
հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենքները, ենթաօրենսդրական
ակտերը, Կառավարության որոշումները և վեր հանել առկա բացթողումներն ու
կատարել համապատասխան առաջարկություններ: Տվյալ նպատակին հասնելու
համար աշխատանքում դրվել են հետևյալ **խնդիրները**, մասնավորապես. ուսում-
նասիրել և վերլուծել ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենք-
ները, ենթաօրենսդրական ակտերը, գործող նորմատիվ իրավական ակտերը,
վեր հանել դրանցում առկա բացթողումները, մշակել առաջարկությունների փա-

թեթ՝ ուղղված դրանց լուծմանն ու օրենսդրաիրավական դաշտի կատարելագործմանը: Հոդվածի **գիտական նորույթը**. Ուսումնասիրելով ՀՀ հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտը, ՀՀ-ում գործող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, վեր են հանվել դրանցում առկա բացթողումները, թերացումները, մշակվել է առաջարկությունների փաթեթ՝ ուղղված վերջիններիս վերացմանը:

Բանալի բառեր. հանքարդյունաբերություն, օրենսդրա-իրավական նորմեր, օրենքներ, նորմատիվ-իրավական ակտեր, հանքանյութեր, օգտակար հանածոներ, պոչամբար, թափոններ, խտանյութեր:

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ОСНОВЫ, РЕГУЛИРУЮЩИЕ ГОРНОДОБЫВАЮЩУЮ ПРОМЫШЛЕННОСТЬ РА

Евгения Арташесовна Акопян
Анаит Хачатуровна Маркосян

Аннотация. Каждая сфера экономики, независимо от отраслевой принадлежности, подчиняется законодательной политике, разработанной государством. Правильно и тщательно разработанная нормативно-правовая база одновременно способствует устойчивому развитию отрасли, а также привлекает инвестиции. Горнодобывающий сектор, являющийся одним из основных стратегических секторов экономики РА, в настоящее время регулируется несколькими законами и подзаконными актами, в отношении которых некоторые результаты, полученные в результате проведенного до сих пор анализа, были реализованы, а другие еще нет, более того, инициированы новые изменения, пакет предложений, по которым не проводился анализ. Поэтому необходимо провести комплексный анализ правовых норм, регулирующих отрасль, изучить изменения, внесенные в эти законы, а также концепцию, регулирующую отрасль и находящуюся в стадии разработки, выделить имеющиеся пробелы и разработать комплекс рекомендаций по их эффективному решению. Последним и обусловлена актуальность выбранной темы. Целью данной статьи является изучение законов, подзаконных актов, постановлений Правительства, регулирующих горнодобывающую промышленность РА, выявление существующих пробелов и предоставление соответствующих рекомендаций. Для достижения поставленной цели в работе были поставлены следующие задачи, а именно: изучить и проанализировать законы, регулирующие горнодобывающую промышленность РА, подзаконные акты, действующие нормативные правовые акты, выявить пробелы, разработать комплекс рекомендаций, направленных на их решение и совершенствование законодательной сферы. Научная новизна статьи заключается в том, что после изучения законодательной базы, регулирующей горнодобывающую промышленность РА, действующих в РА

законов и подзаконных актов, были выявлены упущения и недостатки в них, а также разработан комплекс рекомендаций по их устранению.

Ключевые слова: горнодобывающая промышленность, законодательно-правовые нормы, законы, нормативно-правовые акты, полезные ископаемые, минералы, хвосты, отходы, концентраты.

LEGISLATIVE BASES REGULATING THE RA MINING INDUSTRY

Yevgenya Artashes Hakobyan
Anahit Khachatur Markosyan

Abstract. Every sector of the economy, regardless of sector affiliation, is subject to the legislative policy developed by the state. Correctly and thoroughly developed normative-legal base simultaneously contributes to the sustainable development of the sector, and also attracts investments. The mining sector, being one of the main strategic sectors of the RA economy, is currently regulated by several laws and by-laws, in respect of which some of the results obtained from the analysis have been implemented and there are no others yet, moreover, new changes have been initiated, a package of proposals for which the analysis has not been carried out. Therefore, it is necessary to perform a comprehensive analysis of the legal norms regulating the sector, to study the changes made in those laws, as well as the concept regulating the sector and which is currently in the design phase, to highlight the existing gaps and develop a set of recommendations for their effective solution. The latter determines the **relevance** of the chosen topic.

The purpose of this article is to study the laws, sub-legislative acts, Government decisions regulating the RA mining industry and to reveal shortcomings and make relevant recommendations. To achieve the purpose, the following **objectives** were set in the work, namely: to study and analyze the laws regulating the RA mining industry, sub-legislative acts, existing normative legal acts, highlight the gaps in them, develop a set of recommendations aimed at their solution and improvement of the legislative sphere. **The scientific novelty:** Studying the legislative framework regulating the RA mining industry, the laws and by-laws in force in RA, the omissions and deficiencies in them were highlighted, and a set of recommendations was developed to eliminate them.

Keywords: mining, legislative-legal norms, laws, regulatory-legal acts, minerals, minerals, tailings, waste, concentrates.